

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ելույթը շախմատի միջազգային
մրցաշարի բացման առթիվ**

**Մեծարգո պարոն Նախագահ, հարգարժան իյուրեր, շախմատասերներ եւ շախմատի
միջազգային մրցաշարի մասնակիցներ**

Յերթական անգամ Մարտունի քաղաքը իյուրընկալել է «Սեւանա լիճ» խորհրդանշական
անունը կրող շախմատի միջազգային 16-րդ կարգի մրցաշարի հայ եւ արտասահմանցի
վարպետներին: Ավանդական դարձած ամենամյա այս մրցաշարի ընթացքում, որն արդեն
տարիների պատմություն ունի, միջազգային վարպետների կողմից խաղարկվել են
տպավորիչ պարտիաներ, բացահայտվել հնագույն խաղի նորանոր գաղտնիքներ, ի հայտ
եկել ստեղծագործական մտահղացումներ:

Տարեցտարի մասնակիցների կազմում ավելանում են նորանոր անուններ, որոնց համար
հեղինակավոր այս մրցաշարը դաշնում է առանձնահատուկ փորձաշրջան եւ դարբնոց,
հաղթական փառքի եւ ճանաչման հասնելու լավ հնարավորություն: Խոսքս կարող է
հաստատել հեղինակ գրումայստեր Վիլիտ Սամթոշը, ով դարձավ նախորդ մրցաշրջանի
հաղթողը ու այժմ էլ Մարտունի է ժամանել հաղթողի կոչումը պահպանելու հավակնությամբ:

Այն, որ այս տարի մասնակից երկրների թվում թվում են նոր անուններ՝ Ամերիկայի Միացյալ
Նահանգները, Արաբական Միացյալ Եմիրությունները եւ Իսպանիան, արդեն խոսում են
մրցաշարի հեղինակության աստիճանական բարձրացման մասին:

Անշուշտ, մրցաշարն առանձնահատուկ կլինի նաեւ մեր հայրենակից, Ամերիկայի Միացյալ
Նահանգները ներկայացնող Սամուել Սեւյանի համար, ով արդեն հասցրել է հռչակվել
շախմատային աշխարհում եւ այժմ հանդես է գալու մայր հայրենիքում՝ ունենալով
բազմահազար հայրենակիցների աջակցությունը:

Կարծում եմ, որ «Սեւանա լիճ-2015» շախմատային մրցաշարը Մարտունիում հավաքել է
միջազգային վարպետների բավականին հանրածանաչ եւ ուժեղ կազմ ու խոստանում է
չափազանց լարված, անզիջում պայքար, ստեղծագործական նոր փայլատակումներ,
հաղթանակի բերկրանքներ: Բայց, իմ խորին համոզմանք, վերջում հաղթելու է
բարեկամությունը, մեր հյուրերն այստեղից հեռանալու են ոչ միայն հաղթանակի, այլ նաեւ
շերմ հյուրընկալության ու լավագույն այլ հիշողություններով:

Թույլ տվեք սրտանց շնորհավորել բոլորիս այս սպասված մրցաշարի բացման եւ տոնական
օրվա՝ Վարդապահ կապակցությամբ, մաղթել խաղաղություն, առողջություն ու նորանոր
հաջողություններ, հաճելի ու բարձր տրամադրություն, պայքարի գեղեցիկ ակնբարթներ:

Շնորհակալություն